

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE *أزதாக جريدة يومية سياسية وأدبية - اليوم السابع*

1500 L.Ռ. 76ԲԳ ՏԱՐԻ, ԹԻԻ 198 (21540) ՈՒՐԵԱԹ, 31 ՀՈԿՏԵՄԵՐ 2003 10 ԷՁ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՁ
ՀԱՅԱՍՏԱՆ - ԼԻԲԵՐԱԼ ՊԱՏԳԱՍՄԱՌՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ
ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԵՑԱԾ ԸՆԿ. ՀՐԱՅԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հայաստանի խորհրդարանի մէջ երէկ վերջնականօրէն ձեւաորոշեցաւ Հայաստան - Լիբանան բարեկամութեան պատգամաւորական խմբակը, որուն նախագահ ընտրուեցաւ ընկ. Հրայր Կարապետեան: Ազգային ժողովին մէջ գումարուած անդամակազմին նիստին, պատգամաւորական խումբի նախագահը յայտնեց, որ Լիբանան - Հայաստան բարեկամութեան պատգամաւորական խումբի լիբանանեան կողմը հրաւիրած է Հայաստան: Նիստին ընթացքին ներկայացուցուեցաւ բարեկամութեան խումբի գործունէութեան ծրագիրը:

ՊԸՐՐԻ ԲԱԶՄԱՆԴԱՍ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՎԱՂԸ ԿԸ ՄԵԿՆԻ ԴԱՄԱՍԿՈՍ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի վաղը կը մեկնի Դամասկոս, գլխաւորելով խորհրդարանական, վարչական եւ տեղեկատուական բազմանդամ պատուիրակութիւն մը, որ պիտի մասնակցի Արաբական Խորհրդարանական Համադաշնակցութեան Խորհուրդի 44րդ արտակարգ ժողովին: Ժողովը պիտի սկսի Կիրակի առաւօտեան ժամը 10:00ին, Դամասկոսի մէջ: Քննարկումի առարկայ պիտի դառնան Սուրիոյ դէմ կատարուած իրաւիչէական ոտնձգութիւնները եւ սպառնալիքները, ինչպէս նաեւ Սուրիան հաշուետուութեան կանչելու ամերիկեան օրինագիծը:

ԸՍՏ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ

ԻԶԶԱԹ ԻՊՐԱՇԻՍ ՏՈՒՐԻ ԿԸ ԸԱՄԱԿԱՐԳԷ ԻՐԱՔԻ ՄԷՁ ԽԱՓԱՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԸ

Իրաքի մէջ խափանարարական արարքներուն ու յարձակումներուն աճող թափը պատճառ դարձած է, որ ամերիկեան ուժերու հրամանատարները ենթադրութիւններ կատարեն պանոնք ծրագրողին ու համակարգողին մասին: Ըստ այդ ենթադրութիւններուն՝ նախկին վարչակարգին թիւ երկու անձնատուրները՝ Իսկաթ Իպրահիմ Տուրի յարձակումները կը համակարգէ Սատուս Հիւսէյնի հաւատարիմ ուժերուն եւ Իրաք մտած օտար շարժումներու պիւնտայններուն միջեւ:

Ամերիկեան ուժերը քանի մը օրէ ի վեր ձեռնարկած են Իսկաթ Իպրահիմը գտնելու արշակները: Ծար-ը՝ էջ 10

ԸՆԿԵՐՎԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆԱԿԱՆԻՆ ՄԷՁ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԼԻԻՐԱԻ ԱՆԴԱՄԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՆ ՎԵՐԱՏԻՐԱՑԱԾ 43 ՏԱՐԻ ԵՏՔ

Պրապիլի Սան Փառլո քաղաքին մէջ գումարուող Ընկերվար Միջազգայնականի 22րդ վեհաժողովը իր երկուսան նիստին ընթացքին հաստատեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան լիբանանահամի կարգավիճակը: Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցութիւնը դարձաւ ԱՊՀ երկիրներու կուսակցութիւններէն միակը, որ Ընկերվար Միջազգայնականին մէջ ունի այդ կարգավիճակը: Վեհաժողովը իր որոշումը կայացուց օրակարգի «Կապմակերպական հարցեր» գլուխին տակ:

Երկուսան նիստին, «Շրջանային համարկում» նոր ճարտարապետութիւն» նիւթի քննարկման ընթացքին ելոյթ ունեցաւ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ, Ընկերվար Միջազգայնականի մէջ Հ. Յ. Դ. Ի ներկայացուցիչ ընկ. Մարիօ Նալպանտեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Ը. Միջազգայնականի համագումարը հիւրընկալող Պրապիլի երկու կուսակցութիւններուն եւ բնաւ, որ այս համագումարը Հ. Յ. Դաշնակցութեան համար ունի պատմական նշանակութիւն, որովհետեւ կը վերահաստատուի իր լիբանանահամի կարգավիճակը:



ԸՆԿ. ՄԱՐԻՕ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ խօսքի պահուն

Քննարկուող նիւթին անդրադառնալով, Նալպանտեան նկատել տուաւ, որ Կովկասի մէջ կան անոյժ հարցեր, ներառեալ՝ հողային հարցեր, սակայն չկայ շրջանային համարկում: Ան նշեց, որ Հարաւային Կովկասը դուրս եկած է բռնատիրական խորհրդային փորձառութենէն, սակայն այդ փորձառութեամբ չի սահմանափակուի շրջանին հողովոյթը: «Կան շրջանին մէջ դրացի երկիրներ, այս պարագային՝ Թուրքիան, որ գործադրած է 20րդ դարու առաջին ցեղասպանութիւնը եւ ոչ մէկ քայլ առած է պայն սրբազրկու համար», յայտնեց Նալպանտեան եւ յոյս յայտնեց, որ միջազգային ընտանիքը, ներառեալ՝ Ընկերվար Միջազգայնականը իրենց նպաստը կը բերեն այդ խնդրին լուծման:

Ընկ. Նալպանտեան դիտել տուաւ, որ Հարաւային Կովկասը կրնայ եւ պէ՛տք է հանդիսանայ հիւսիս - հարաւ եւ արեւելք - արեւմուտք առանցքները կապող օղակը, սակայն Հարաւային Կովկասը մէկ միւտը չէ, այլ՝ կապմուտ է երեք երկիրներէ, ուր ժողովրդավարութեան կարգացումը տարբեր մակարդակներու վրայ է: Հայաստան ունի աւելի խառնաշաւք ժողովրդավարութիւն, հետեւաբար կարելի չէ ամբողջ շրջանը դիտել նոյն ձեւով: «Անցեալի վերանայման, սխալներու սրբազրկութեան եւ ժողովրդավարութեան կարգացման ճանապարհով կարելի է Հարաւային Կովկասի մէջ յառաջանել շրջանային համարկում», եզրակացուց ընկ. Մարիօ Նալպանտեան:

Ընկերվար Միջազգայնականի 22րդ վեհաժողովին Հ. Յ. Դ. պաշտօնական պատուիրակութիւնը կը գլխաւորէր Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Հրայր Մարգարեան, իսկ պատուիրակութեան մաս կը կազմէին Ընկերվար Միջազգայնականի մէջ Հ. Յ. Դ. ներկայացուցիչ՝ Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ ընկ. Մարիօ Նալպանտեան, Ընկերվար Միջազգայնականի Կանանց կազմակերպութեան մէջ Հ. Յ. Դ. ներկայացուցիչ Մարիա Թիթիկեան եւ Հ. Յ. Դ. Հարաւային Ամերիկայի շրջանէն Սիմոն Քերիմեան եւ Օննիկ Ռամձեան: Պատուիրակութեան անդամները հանդիպումներ ունեցան տարբեր կուսակցութիւններու ներկայացուցիչներու հետ:

Իր ներկայ կառոյցով, Ընկերվար Միջազգայնականը ժառանգորդն է 19րդ դարու վերջաւորութեան հիմնուած Ընկերվար Միջազգայնականին, որուն Հ. Յ. Դ. անդամակցած էր 1907ին: 1960ական թուականներուն, Հ. Յ. Դ. անդամակցութիւնը վերակազմուած Ընկերվար Միջազգայնականին, դարձած էր՝ Միութեան կազմակերպական կանոններու փոփոխութեան պատճառով: Նոր Ընկերվար Միջազգայնականին Հ. Յ. Դ. ղիտրոնի կարգավիճակով անդամակցած էր 1996ին՝ կազմակերպութեան 20րդ վեհաժողովին ընթացքին, Նիւ Եորքի մէջ: 1999ին, Ընկերվար Միջազգայնականի 21րդ համագումարին, Փարիզի մէջ, Հ. Յ. Դ. ստացաւ խորհրդակցական անդամի կարգավիճակ: Հ. Յ. Դ. լիբրաւ անդամի կարգավիճակ ստանալու որոշումը որդեգրուեցաւ 2002 Յունիսին, Քալպայանքայի մէջ գումարուած Ընկերվար Միջազգայնականի խորհուրդին կողմէ: Այդ որոշումը հաստատուեցաւ երէկ, Սան Փառլոյի մէջ գումարուող այս 22րդ վեհաժողովին:

Ընկերվար Միջազգայնականը այսօր կը համախմբէ հարիւր երկիրներէ ընկերվարական, ընկերվար - ժողովրդավարական եւ աշխատատարական 150 կուսակցութիւններ, որոնց 52ը մաս կը կազմեն իրենց երկիրներու իշխանութեան:

ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ՇՐՋԱՆԵՐՈՒՆ ԴԵՍ ԿԻՐԱՐԿՈՒՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ԼՈՒՐՁ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Կապալի եւ Այլորդրանանի մէջ վայրագութեան ալիքին վերջ տալու միջոցներու հարցը տարակարծութիւններ ստեղծած է իսրայէլեան բանակին եւ կառավարութեան միջեւ: Սպայակոյտի պէտ Մոշէ Եաւլոն խիստ ոճով դատաւարած էր կառավարութեան որդեգրած ապահովութեան միջոցառումները պաղեստինցիներուն դէմ:



Եաւլոնի ոճը քննադատուեցաւ առեւտուրի նախարար Էհուտ Օլմերթի կողմէ, որ ըսաւ, թէ սպայակոյտի պէտը լուրջ է իր մտահոգութիւններով, եւ եթէ պաղեստինեան շրջաններուն մէջ կացութիւնը վտանգաւոր կը նկատէ՝ պէտք է ընէ, սակայն ոչ իր արտախայտած ձեւով եւ ոճով:

Աշխատատարական կուսակցութեան նախկին ղեկավար Ամրամ Միցնա Կօրակցութիւն յայտնեց Եաւլոնի, դիտել տալով, որ առանց քաղաքական հեռանկար կար ունեցող ծրագիրներու, պաղեստինեան շրջաններուն մէջ իսրայէլեան բանակին գործողութիւններն ու միջոցառումներն ընդամենը պատուիրակութիւն չեն բերեր: Միցնա մեկն է չափաւորական իսրայէլցիներէն, որ մասնակցած է ժընեւի նախաձեռնութեան ու համաձայնագրի մշակման:

Մինչ այդ, պաղեստինեան շրջաններուն մէջ ապահովութեան իրավիճակը կը մնայ մտահոգիչ: Նապլոսի Պալաթա գաղթականին մէջ Չորեքշաբթի գիշեր սպանուեցաւ 12ամեայ պաղեստինցի մանչուկ մը: Իսրայէլացի պիւնտրներ կրակ բացած էին, երբ մանչուկը քարեր կը նետէր անոնց ճիւղին վրայ՝ գաղթականին մէջ: Կապալի հարաւային Ռաֆաի շրջանին մէջ իսրայէլեան ուժեր ներխուժեցին քաղաքը, ուր պուլտոյզներով քանդեցին բնակարան մը, որ ենթադրաբար կ'օգտագործուէր Եգիպտոսէն պէնքի մաքսանէն գումարներ տանելու:

Ծար-ը՝ էջ 10

**Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ
ՋԱԲԱԽՔ
ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱՔ
Բանախօս՝ ԸՆԿ. ԸԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՅԵԱՆ
● Գեղարուեստական յայտագիր
Երեքշաբթի, 4 Նոյեմբեր 2003, Երեկոյեան ժամը 8:00ին,
3. Տեր Մելքոնեան սրահին մէջ:**

**Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԸԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆ
ՋԱԲԱԽՔ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ
ՀՐԱՅԻ ԲԱԶԷԻ ԳՈՐԾԵՐՈՒ
Բացում՝ Երկուշաբթի, 3 Նոյեմբեր 2003, Երեկոյեան ժամը 8:00ին,
Լ. եւ Ս. Յակոբեան Ազգային Բոլէժի սրահին մէջ:
Յուցահանդէսը կը շարունակուի Երեքշաբթի (10:00էն 21:00)
եւ Չորեքշաբթի (10:00էն 14:00):**

«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏ»Ը ԽՍՏԻ ԿԸ ՔՆՆԱԳԱՏԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Բարեկարգումի Ազգային Ճակատ»ը երեկ իր հերթական նիստը գումարեց երեսփոխան Նայլա Մուսուառի բնակարանին մեջ, ներկայութեամբ խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնիի, նախկին վարչապետներ Սէլիմ Հըսի եւ Օմար Քարամէի եւ երեսփոխան Պուրոս Հարափի:

Ճակատը ժողովին ընթացքին խստի քննադատեց նախարարաց խորհուրդին կողմէ 2004ի պետական պիտոճէի քննարկման եղանակը, նկատել տալով, որ այս եղելութիւնը լիբանանցի ժողովուրդին համար նախատիւք է եւ կ'ապացուցէ, որ երկրին կառավարութիւնը «ամուլ» է, իսկ պետութիւնը չի մտածեր երկրին գերագոյն շահերու ապահովման մասին:

Ճակատը շեշտեց, որ ազգային պարտաւորութիւն է ընդդիմադիր կեցուածք որդեգրել երկրին իշխանութեան դէմ, հաշուետուութեան կանչել վայն է իրականութիւնները ուղղակի յայտարարել ժողովուրդին առջեւ:

Ճակատը հարց տուաւ, որ աւելի լաւ չէ՞ր եթէ նախարարները համախոհութեամբ յանգէին որոշումի մը, քան պախարակուիլն ու միջամտութիւններու ենթարկուիլը:

Ճակատը պահանջեց կառավարութեան եւ երեսփոխանական ընտրութիւններուն համար մշակած իր ծրագիրը այսօրուին իսկ յայտարարել, որպէսզի համաձայնութիւն գոյանայ անոր շուրջ եւ օրէնքը գործադրուի:

Ճակատը ընդգծեց նաեւ, որ կը մերժէ կառավարութեան որդեգրած կեցուածքը ԵՈՒՆԵՍԿՕի պալատին գծով:

ՄԱՀԱԶԴ

- Տիկին Էօթենի Գանձապետեան
- Տէր եւ տիկին տոթթ. Փիեռ եւ Մատլէն Գազանճեան
- Տէր եւ տիկին Յարութիւն եւ Եոլլա Գանձապետեան
- Տէր եւ տիկին Ռաֆֆի եւ Արփի Գանձապետեան
- Տէր եւ տիկին Ֆրէտի եւ Սինթիա Հաժար
- Քիւթիլեքեան ընտանիք
- Տէր Վարդանեան ընտանիք
- Վահրատեան ընտանիք
- Սատէր ընտանիք
- Հաժար ընտանիք
- Գազանճեան ընտանիք
- Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, աներոջ եւ հարազատին՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՆՁԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 30 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 6:00ին, իր բնակարանին մէջ, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շաբաթ, 1 Նոյեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 1:30ին, Էլքեֆիէի Ս. Յակոբ եկեղեցու մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Ֆրէն Շրպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Յակոբ եկեղեցու «Տիրան Պապիկեան» սրահին մէջ, Շաբաթ, 1 Նոյեմբեր միջեւ երեկոյեան ժամը 7:00, Կիրակի, 2 Նոյեմբերին՝ ժամը 10:00էն կէսօրէ ետք ժամը 5:00, եւ երկուշաբթի, առաւօտեան ժամը 10:00էն կէսօրէ ետք ժամը 5:00:

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen
- We Also Provide
- Laboratory service,
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՑԱՍԱՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՆԵՐ ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԵՆՈ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.

ԻՆՏԵՐ ԲԵԷԸ

ՆԱԽԱՐԱՐ ՊՈՒԷՅՉ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԿԱՏԷ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ՝ ՍՈՒՐԻՈՅ ՄԻՋԱՍՏՈՒԹԵԱՆ

Կենսոյորտի նախարար Ֆարէս Պուէյչ երէկ յայտնեց, որ Լիբանանի կառավարութեան կողմէ հարցերու բարդացումը եղաւ հիմնական պատճառը Սուրիոյ միջամտութեան: Ֆարէս այս յայտարարութիւնը կատարեց հիւանդանոցներու սենտիքայի նախագահ Սլէյման Հարունի գլխաւորած պատուիրակութեան հետ ունեցած իր հանդիպումէն ետք:

Պուէյչ նկատել տուաւ, որ 2004ի պետական պիտոճէի նախագիծը «կարելի էր» վաւերացնել առանց յաւելեալ բարդութիւններ պատճառելու կառավարութեան նիստերուն ընթացքին:

Պուէյչ շեշտեց, որ երկրի մը պիտոճէի նախագիծը անպայման պէտք է որոշուի որոշ իրականութիւններէ, ինչպէս նաեւ ճշդ պետութեան պարտաւորութիւնները, որ այս պարագային կը կայանայ միտումը կասեցնելու եւ փտածութեան վերջ տալու առաքելութեան մէջ, «ապա թէ ոչ երկիրը կը մնայ տնտեսական անէյ կացութեան մէջ եւ պետութիւնը ոչ մէկ օժանդակութիւն կը ստանայ այլ երկիրներէ»: Հանդիպումին քննարկուեցան Լիբանանի կենսոյորտի անշուղջ հարցեր, ինչպէս նաեւ բժշկական աղբերու յատուկ կէտրոն մը ձգելու անհրաժեշտութիւնը:

Պուէյչ նշեց, որ հանդիպումէն ետք դիտել տուաւ, որ երկիրը կը տառապի կենսոյորտային մեծ հարցերէ, ինչպէս նաեւ քաղաքական ապականումէ:

ՇԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ԼՕՍԻ Ծրագրային Վարչութեան եւ անգլիական դեսպանատան ներկայացուցիչ Տարեմ Ճնյմի միջեւ Հինգշաբթի, 30 Հոկտեմբերին, ԼՕՍԻ «Ա. Պուլղուրճեան» կեդրոնի մէջ 13,000 տոլարի յատկացումի համաձայնագիր մը ստորագրուեցաւ:

Ճնյմի սոյն համաձայնագիրին՝ ԼՕՍԻ «Ա. Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի ընկերային գրասենեակի «Խոհարարութեան դասընթաց»-ի ծրագիրը պիտի ֆինանսաւորուի:

Ճնյմ Տարեմ մտնէ ծանօթացաւ ԼՕՍԻ գործունէութեան եւ ակնատես եղաւ ԼՕՍԻ «Ա. Պուլղուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի բաժանմունքներու գործունէութեան. բարձր գնահատեց ԼՕՍԻ աշխատանքը եւ հետագայի գործունէութեան պատրաստակամութիւնը յայտնեց:

ԼՕՍԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ ԲԵՍԱԴՐՈՅ՝ ՂԱԽԹ ԶԱԿՈՐԵԱՆ ԿԵՐԱՍՈՒՄ

Արձանագրութիւնները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 11:00-1:00 Լեւոն Շանթ կեդրոնի մէջ, Ա. յարկ:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

●Ոսկերչատան մը համար՝ վարպետ ձիւղձի եւ վարպետ սետեքեր մը: Դիմել՝ հեռ. 01 - 242549:

ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ԿՎԱԿՆԿԱԼԷ, ՈՐ ԽՈՐԷՐԴԱՐԱՆԸ ԱՐԱԳ ԱԲԱՐՏԷ 2004Ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՃԷԻ ԸՆՆԱՐԿՈՒՄԸ

Նախագահ ԿՕՐ. Էմիլ Լախուտ երէկ յայտնեց, որ խորհրդարանը կը սկսի 2004ի պետական պիտոճէի նախագիծը քննարկել եւ ամէնէն մօտիկ ժամանակամիջոցին ատարել վայն, որպէսզի ըստ օրէնքի գործադրուի նախագիծը, «շարժելով երկրին տնտեսական անիւ»:

Նախագահ Լախուտ ատելցուց, որ նախագիծին թուանշանները կրնան սպասուած որակին համապատասխան չըլլալ, սակայն կառավարութեան սահմանափակ կարողութեանց սահմաններէն ներս ապահովուած է ընկերային, կրթական եւ առողջապահական մարզերու որոշ կարելիութիւններ, ինչպէս նաեւ բարգաւաճման կարգ մը ծրագիրներ, որոնցմէ կարելորագոյնը կը մնայ ջրանցքներու կառուցումը:

Նախագահ Լախուտ նշեց նաեւ, որ 2004ի պետական պիտոճէի նախագիծը առիթ պիտի ընծայէ պետութեան արժարձելու լիբանանցի գաղթականներու տունդարձի հարցը, ինչպէս նաեւ հարաւային Լիբանանի մէջ բարգաւաճման ծրագիրներու գործադրութիւնը, միշտ ի մտի ունենալով ճարտարարուեստի եւ երկրագործութեան մարզերու բարելաւումը:


Նախագահ Լախուտ շեշտեց, որ յառաջիկայ տարուան ընթացքին հարկ է մնալ այսպէս գործադրել բարեկարգումներու ծրագիրը եւ ատելցուց, որ նշեալ աշխատանքներուն պէտք է օժանդակեն պատասխանատուներ եւ խնդրոյ առարկայ բոլոր մարմինները, որպէսզի ազգային գերագոյն շահերը ըլլան հիմնական նպատակ:

Նախագահ Լախուտ ընդգծեց, որ շրջանային պայմանները Լիբանանի կը պարտադրէ ըլլալ կայուն եւ անբախտելի իր ներքին միասնականութիւնը եւ ազգային կեցուածքը:

Միւս կողմէ, նախագահ Լախուտի այցելեց երեսփոխան Մոհամէտ Պըրժաուի, որ անոր փոխանցեց Հրպալլայի ընդհանուր քարտուղար Հասան Նասրալայի ողջոյնը: Հանդիպումին նախագահ Լախուտ շեշտեց Սուրիոյ հետ Լիբանանի գործակցութեան անհրաժեշտութիւնը:

Նախագահ Լախուտ ընդունեց նաեւ երեսփոխան Քապալան Իսա Խուրին:

Նախագահական պալատի հիւրերէն եղան նաեւ հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Միքաթի, երեսփոխաններ Ղասսան Աշքար, Միշէլ Ֆարաուն, Ֆարիտ Խապէս, Նատէր Սուբար, Ուսթի Գարիբի եւ Հիւսէյն Համ Հասան:



Նախագահը կ'ընդունի Միքաթին

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ ընդունեց «Սարատար» դրամատան ընդհանուր տնօրէն Մարիօ Սարատարը, ներկայութեամբ ապագետականացման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղազի Եուսէֆի:
- Քննարկուեցան եւ ելեւմտական թղթածրարները:
- Վարչապետ Հարիրի ընդունեց նաեւ նախկին նախարար Ժոզէֆ Հաշէ-Կալուսթեանը, թէ հանկանցման գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Ղազի Եուսէֆի:
- Քննարկուեցան Վարչապետարանի այցելուներէն եղան նաեւ Գերմանիոյ մէջ Լիբանանի դեսպան Շիշամ Տիմաշքի եւ Սիբիլ Կրուպի վարչական խորհուրդի մէկ պատուիրակուցի ընդհանուր գլխաւորութեամբ Անթնի Նելսոնի եւ ներկայութեամբ երեւմտեքի նախարար Ֆուատ Սինիորայի:

ԼԻԲԱՆԱՆԱՏԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Կը ներկայացնեն՝

ԱՌՆԱԷ

ՊԷՅՐՈՒԹԻ ՄԵՋ



Նոյեմբեր 18ին ԻՒՆԷՍԿՕ ի սրահին մէջ երեկոյեան 8:30-ին տոմսեր՝ Trading Places 01 611600, CD-Thèque Ashrafieh - ABC, Համագայի զբոսանք, Նարեկացի գրախանութի եւ Ազգային Դպրոցներէ

BYBLOS BANK

ԸՆԴՈՒՄԱԸ ԵՐԵԿՈՅ

Շուգանաւորութեամբ **Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա.**

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Մեծի Տանն Կիլիկիոյ

Կազմակերպութեամբ **ԸԱՅ ԸԱՄԱՆԱՐԱՆԱԲԱՐՏԵՐՈՒ ԸԱՄԱՆԱՐՈՒՄԻՆ**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 31 Հոկտեմբեր 2003ի երեկոյեան ժամը 7:00ին, Կաթողիկոսարանին մէջ, Անթիլիաս:

Շրախրուած են լիբանանեան բոլոր համալսարաններու հայ դասախօսները եւ 2002-2003 տարեշրջանի հայ համալսարանաւարտները:

Կը խնդրուի 2002-2003 տարեշրջանի հայ համալսարանաւարտները, որոնք ներկայ պիտի ըլլան, իրենց ներկայութիւնը հաստատելու համար կապ պահեն հետեւեալ թիւերէն մէկուն հետ՝ 03-772072, 03-625775 - 03-332345

ՇՐԱԲԵՐ


ASHIAN TOURSԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) Այս Կիրակի, 2 Նոյեմբեր, միտքայ շրջապտոյտ դէպի Դամասկոս, Ատոմայա, Մաալուլա, կէսօրուան ճաշով, միայն 20\$, առանց ճաշի՝ 12\$:
- 2) Նոր Տարին Կիրակի մէջ 30 Դեկտեմբերէն 2 Յունուար, չորս օր APOLLONIA BEACH 5 աստղանի շքեղ պանդոկ, լման պտոյտներ, օր մը Նիկոսիա, օր մը Այաճաբա, Լարնաքա, Թրոտոս լեռները, կենդանաբանական պարտեզ: Գին փոխան 575\$ միայն 335\$, իսկ Les Palmires A class պանդոկ, Լարնաքա փոխան 385\$ միայն 240\$:
- 3) Սօս օրէն Հայաստանի օդանաւի տոմսերու նոր գեղունակ գիները եւ 8 օր եւ 15 օրեայ շրջապտոյտներու գիները:
- 4) Օդանաւի գեղունակ գիներով տոմսեր: Աշտան բուրգ 01-261177, 240654 եւ 03-233978:

ԾԱՆՈՒ Է

Պուրճ Համուտի Կիլիկիա թաղ, Ոոր շէնք, Ա. յարկ, 120 մեթր շինութիւն, 120 մեթր պատշգամ, իտալական կահաւորում, 3 սենեակ + հիւրասրահ, զոյգ բաղնիք, առանձին կառատուն, հեռաձայն, կալուածաբարութեամբ (թափու): Գին՝ փոխան 80,000\$, միայն 45,000\$: ԵՆ. 01-240654, 261177 եւ 03-233978:

7րդ Արուեստ



ՌՈՊԵՐԹ ՔԷՇԻՇԵԱՆԻ «ԱՐԱՄ» ԺԱՊԱԲԷՆԸ ՈՒՂՂՈՒԹՅԸ Է ԲՈՒՈՐԻՆ

«Արամ» ժապաւէնի բեմադրիչ Ռոպէրթ Քէշիշեանն Հայկական Յեղափոխական թերապիայի վերաբերյալ իր փորձերը քննարկում է:

Յրանսածնած արուեստագէտը կը պատկանի այն սերունդին, որուն համբերութեան բաժանը յորդեցաւ 1975-1985 տասնամեակին... Արուեստագէտը իր ընդվզումը կ'արտայայտէ ժապաւէնի մը ճամբով եւ մեծ վարպետութեամբ:

Անոր պատմութիւնը պատմութիւնն է գաղտնաբերութիւնը, որ մասնակից է նաեւ Արցախեան հերոսամարտին. ժամանակներու տեղափոխութեամբ մը 1990ական թուականներուն է, որ Փարիզի մէջ կը կատարուի ահաբեկչական արարք մը, եւ սխալ ենթադրութեամբ կը վերագրուի Արամին: Արցախէն վերադարձած Արամ կը հետապնդուի, եւ ժապաւէնը իր աւարտին կը հասնի գաղտնի ոստիկանական ժապաւէնի մը անդունդով, եւ որ իր պրկումը կը պահէ մինչեւ վերջին տեսարանը:



Սիմոն Արզախեան եւ Լուսինա Ազապալ Արամի եւ Մելինէի դերերով

տարներու եւ այլ յարաբերութիւններ կը մտնէ եւ հանգիստներ մտածումներու կը մղէ:

Արամի դերին մէջ Սիմոն Արզախեան կը ցուցաբերէ գերագանց իսպարկութիւն մը, ինչպէս որ կատարած էր «Արարատ»ի մէջ՝ Արշիլ Կորեիի դերով:


Բեմադրիչը իր այս գործով կը հատուցէ պարտք մը, նախեւ առաջ՝ իր ծնողքին նկատմամբ, որուն կը պարտի ամէն ինչ՝ իրեն հայ ու մարդ: Իր հերոսը Արամ կոչելով, ան կը վերադարձնէ շրջապատին կողմէ Արամին վերածնունդ իր հօր իսկական անունը, թէկուզ տարբեր կերպով մը:

Ապա Քէշիշեան պարտական կը զգայ իր ազգին, իր ծագումին նկատմամբ եւ կը փափաքի անոր ճանաչումը դարձնել ամբողջ աշխարհին սեփականութիւնը:

Քէշիշեան պարտք մըն է, գործարարիչը կը կատարէ արտայայտելով տարիներու ընթացքին իր մէջ կուտակուած զգացումները:

Վերջապէս, կայ նաեւ Քէշիշեանի յանձնառութիւնը արուեստին նկատմամբ: Թէեւ ծնողքի ու ազգի գնակի՝ ան նաեւ արուեստագէտ է եւ աշխարհին կը ներկայանայ ոչ թէ իրեն քարոզիչ, այլ՝ իրեն պահանջատէր: Եւ ոչ միայն իրեն պատուհաններ, այլ նաեւ իրեն ստեղծագործ մարդ, որ կը խօսի համամարդկային լեզուով մը եւ՝ ընդհանրական հարցերու մասին: Թէեւ պատմութիւնը հայու պատմութիւն է, սակայն հոն արծարծուած հարցերը թէ՛ մարդկային յարաբերութիւններու մարզին մէջ եւ թէ՛ հաւաքական արդարութեան առումով կը վերաբերին համայն մարդկութեան: Ժապաւէնը ուղղուած է բոլորին:

Քաղուած՝ «ՀՕՐԻՉՈՒՆ»էն



Ֆրանսահայ բեմադրիչ Ռոպէրթ Քէշիշեան

Ժապաւէնը, սակայն, իր պատմութիւն արագ կը ընթանայ առնչութեամբ, ունի մարդկային յարաբերութիւններու խորանկար մը, որ «սերի մուրաբերէն» անունով, հոգեբանական հարցեր կ'արծարծէ, հայր ու զաւակի, զինակից մարտիկներու, թուրք ու ֆրանսացի պաշտօնա-

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԱՍԱԿԱՆ ԺԱՊԱԻՆՆԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան կազմակերպութեամբ 28 Հոկտեմբերէն սկսեալ Երեւանի «Մոսկովա» շարժապատկերի սրահին մէջ տեղի կ'ունենայ ամերիկեան դասական ժապաւէններու նուիրուած շաբաթ մը, որ կ'երկարի մինչեւ 31 Հոկտեմբեր:

նացած է «Օսքար»ներու եւ Ամերիկեան Շարժապատկերի Հիմնարկին կողմէ կը ման հանդիսութեան ընթացքին, ամերիկեան Հէլլոյի տունին առիթով պիտի կազմակերպուի նաեւ լաւագոյն ծագումով մը:

Նշենք, որ այս ժապաւէններուն մեծ մասը առանձին անգամ ըլլալով է, որ

կը ցուցադրուի Հայաստանի մէջ: 31 Հոկտեմբերին, փառաստօնին փակման հանդիսութեան ընթացքին, ամերիկեան Հէլլոյի տունին առիթով պիտի կազմակերպուի նաեւ լաւագոյն ծագումով մը:

ԵՐԵՒԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՒ ՇԱՐՇԱՊԱՏԿԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՆՈՐ ՄԱՍՆԱՃԻՂ

Ըստ «Արմէնփրէս» լրատու գործակալութեան, Հայաստանի կառավարութեան մէջ որոշումին համաձայն, Երեւանի Թատրոնի եւ Շարժապատկերի Պետական Հիմնարկը իր մասնաճիւղը պիտի ունենայ Վանաձորի մէջ: Հիմնարկը մասնաճիւղը ունի նաեւ Գլխավորի մէջ, ուր ներկայիս կ'ուսանի 46 հոգի: Գլխավորի մասնաճիւղը, դերասանական եւ բեմադրական բաժանումները կողմնակիցին, ունի նաեւ պատկերասփռուի բաժին: Թատրոնի եւ Շարժապատկերի Պետական Հիմնարկը ծրագրուած է հետագային մասնաճիւղը բանալու նաեւ Սիւնիքի կայան կամ Գորիքի քաղաքներէն մէկուն մէջ:

Նոր Ժապաւէններ

Լիբանանեան շարժապատկերի սրահները խնդրած են շուկայական յաջողութիւններու հետամուտ, սակայն այսպէս միջակութեան սահմաններուն մէջ տարուբերող ժապաւէններով: Բնականաբար անոնց մէջ կան սակաւաթիւ բացառութիւններ: Պետք է նշել սակայն, որ անկախ իրենց որակէն, ցուցադրուած ժապաւէնները այլազան են սեռերու իմաստով եւ կը գոհացնեն տարբեր հետաքրքրութիւններ ունեցող հանդիսատեսները:

«ՆՆՏՐՈՒՈՐԼՏ»
Քննադրիչ՝ Լէն Ուսյովէն
Ամբողջութեամբ մուփի մէջ ցկարահանուած այս երեսակայական **էքշըն** ժապաւէնը կարծէք միաձուլումը ըլլայ անիրական եակներու, ինչպէս



արիւնախում մարդերու, մարդագայլերու եւ անոնց փոխկերպուող տարբերակներու մասին վերջին քանի մը տարիներուն մեծ պատան շարժարեան ժապաւէններուն, որոնք անպայմանօրէն կ'ունենան շարունակական բաժիններ: Անոնց փաղանգէն յիշենք «Պլէյսթոլ» ու «Էքս մէյնը»:

«Անտրոնորլտ», որ իր կարգին կու տայ շարունակականութիւնը իր նոյն իրերու, լոյնայն խոստումներ, կը բեմադրէ արիւնախումներու եւ մարդագայլերու անվերջ պատերազմին մէկ նոր հանգրիւանը, որ գարգացած է նաեւ շէքսպիրեան շունչ ունեցող սիրային ողբերգական պարունակով: Արիւնախումներու ցեղին պատերազմիկ Ալիսը (Քէյթ Պլեյնսէյլ) իր պայքարին ընթացքին կը կապուի մարդագայլ Մայքըլին (Սթիւ Բիլիմոր), որ կ'ուզէ խաղաղ աւարտ մը տալ անվերջ պատերազմին:

Էքշընի սիրահարները գոհացնող «Անտրոնորլտ» դժբախտաբար հարուստ է իր ժանրի քիչէններով, ինչպէս նաեւ՝ դիպաշարին անտեղի երկարաձուլումներով:

«ԼԸ ՏԻՎՈՐՍ»
Քննադրիչ՝ Նէյմա Այվերի

Ֆրանսական եւ ամերիկեան ընկերային բարբերը իրարու դէմ յանդիման բերող այս տրաման կը յատկանշուի յատկապէս երկու երիտասարդ եւ կարող դերասանուհիներու ներկայութեամբ: Նամփի Ուաքս ստանձնած է դերը Փարիզ բնակող ամերիկացի երիտասարդ կնոջ մը, որուն ֆրանսացի ամուսինը զինք կը լքէ յի վիճակի մէջ: Անոր օգ-



նութեան կը փութայ բոլոր (Քէյթ Հաստըն), որ իր կարգին կը համտեսէ փարիզեան արկածախնդրութիւնները: Իրարու ազուցուած սիրային եւ ընկերային ընկերը կը զարգանան շատ դանդաղօրէն, բայց միաժամանակ արտայայտելով սեւ երգիծանքի զգացողութիւն:

Երկու մշակոյթներուն միջեւ բախումները յատկապէս կը զարգանան ամուսնալուծման հանգրիւաններուն ընթացքին ի յայտ եկած տարբերութիւններով:

Հանգրաւ մթնոլորտի մը մէջ եւ քանի մը ուղղութեամբ զարգացող դիպաշար մը ունի «Լը տի-

վորս»ը, որուն մէջ դեր ստանձնած են նաեւ ժանր Մարք Պարր եւ Կլեյն Քլոզ:

«ԺԸ ՌԵՍՈՒՍ»
Քննադրիչ՝ Տայան Քրիստ

Ֆրանսական սիրային կատակերգութիւններու սեռին նորագոյն մատուցումն է այս ժապաւէնը, որ օժտուած է ներկայութեամբ ֆրանսական շարժապատկերի հմայիչ աստղերէն Սոֆի Մարսոյի եւ Վենսան Փերէզի: Սիրային եռանկիւնի մը այս տարբերակին մէջ Վենսան Փերէզ շատ համոզիչ կերպով կը մարմնաւորէ կերպարը գործին, սիրարկածներուն եւ հեծիկին միջեւ իր կնոջ գոյութիւնը մոռցած երիտասարդի մը, որ ժապաւէնին երգիծական բնոյթին մեծապէս կը նպաստէ իր բերութիւններուն խոշորացուցային համեմատութիւններով: Իրերու այս վիճակին մէջ թատերաբեմ մուտք կը գործէ ֆրանսացի սիրահարը (Շարլ Պերլիկ), որ նաեւ միաժամանակ բեմագիր է եւ իր ներշնչումը կը ստանայ իր սեփական սիրային կեանքէն եւ անոր վերիվայրումներէն: Բնականաբար տունէն հեռանալ մերժող ամուսինին կերպարը պիտի հարստացնէ անոր բեմագրութիւնը, այն աստիճան, որ երկու ոսոխները պիտի դառնան մտերիմներ:

Սակայն հանդիսատեսին խնդրի պահեր պարզեւոյ եւ հետաքրքրական անկիւնադարձեր ունեցող այս ժապաւէնը կը թողու ձգձգուած ըլլալու տպաւորութիւն: Անոր երկրորդ կէտը մանաւանդ կ'իյնայ կրկնութիւններու ծուղակը:

«ՏԸ ԿՈՒՏ ԿԸՐԼ»
Քննադրիչ՝ Միկէլ Արքեա

Քննադատներու կողմէ մեծապէս գնահատուած դերակատարումով ձեռնիքը Էնիսթըն կը ներկայացնէ սովորական ու անհրապոյր կեանք մը ապրող երիտասարդ կնոջ մը կերպարը: Իր ամբողջ ժամանակը մեծաքանակի վանառատան մը մէջ իբրեւ կանգնած ծառայիչ Լէսը իր կեանքին մեծագոյն արկածախնդրութիւնը կ'ապրի, երբ կը սկսի ընթացք տալ իր շատ աւելի երիտասարդ պաշտօնակիցին հետ սիրային յարաբերութեան մը: Հոգեբանական որոշ խանգարումներ ունեցող երիտասարդ սիրա-



հարին (ձեյթ Կիլլընհալ) եւ ծառայիչ յարաբերութիւնը գլխաւորաբար հիմնուած է կեանքին նկատմամբ երկուքին ունեցած արգահատանքին վրայ:

Կեանքի բիրտ իրականութիւններուն եւ երազային ձգտումներուն միջեւ հակասութիւններ գծող ժապաւէն մըն է «Տը կուտ կըրլ», որուն մէջ դեր ստանձնած են նաեւ ձոն Սի. Ռէյլի, Տեպորա Ռաշ, ձոն Քերլը Լինչ եւ ուրիշներ:

«ՏԱՐՔ ՊԼՈՒՒ»
Քննադրիչ՝ Ռոն Շելթըն

Գողութեան եւ մարդասպանութեան մը հետախուզութիւնը իրարու վրայ կը բանայ դէպքերու այնպիսի շարք մը, որ կաշառակեր ոստիկան մը ստիպուած ըլլայ վերատեսութեան ենթակելու իր ռազմավարութիւնը, մանաւանդ որ անոր օգնական կը նշանակուի նորէն ոստիկան մը: Նման ճիւղ մը արծարծող «Թրէյնինկ տէյ» ժապաւէնին ճիւղին հետ մեծ նմանութիւններ ունեցող այս գործը, սակայն, նուազ յանդուգն է, քան առաջինը, որուն մէջ կաշառակեր ոստիկանի կերպարին իր մարմնաւորումին համար Տենզըլ Ուաշինկըքըն տիրացած էր լաւագոյն դերասանի «Օսքար»ին:

Կաշառակեր ոստիկանին կերպարը բաւական յաջողութեամբ փոխանցած է Քրէք Ռասըլ, որուն այս դերակատարումը կը նկատուի անոր ասպարէզի ամենէն փայլունը, ինչպէս նաեւ՝ ժապաւէնին սակաւաթիւ գօրաւոր կողմերէն մէկը:

Ոստիկանական այս տրամային մէջ հանդէս կու գան նաեւ Սքաթ Սփիտմէն, Մայքըլ Միշէլ եւ ուրիշներ:

ԾԱՆՈՒՑՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնակալ թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենեակը:


Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

www.hamazkayin.com

Նորաստի Նորաստի

ՄԵՌԱԾ ԳՏՆՈՒԱԾ ԵՐԱԺԻՇՏ ՄԸ

Լիթվանացի տարեց երաժիշտ մը, որ նիւթական անցուկ պայմաններ կը դիմազրուէր, մեռած գտնուած է Վիլնիուսի իր բնակարանին մէջ:



Ռեքասիուսի երաժիշտ Լիթվանացի Վալդաս Կուրսիս

Չէր քանակազատուած է 75 տարեկան երաժիշտ Անթանաս Ռեքասիուսի մարմնին քով: Ոստիկանութիւնը փամփուշտով զարցուած վէրք մը նկատած է անոր գլխուն մէջ, ինչ որ մտածել կու տայ, թէ ան անձնասպան եղած է:

«Պի. Պի. Սի», որ կը հաղորդէ լուրը, կը գրէ, թէ Ռեքասիուսը չբաւարարուած մտածուած էր եւ հագուելու համար իր յարկաբաժինին վարձքը վճարելու Եկամտուի աղբիւրի չզոյւթիւնը այնքան կը մտահոգէր զայն, որ ան կը տառապէր հոգեկան անկումով:

Լիթվանիոյ Երաժիշտական տեղեկատուութեան եւ հրատարակութեան կեդրոնին համաձայն, Ռեքասիուսի գործերը զարտուղի էին եւ յատկանշուած էին երգիծանքով ու այլաբանական թեմաներով:

Անթանաս Ռեքասիուս ծնած է 1928ին, աւարտած է Լիթվանիոյ Պետական երաժիշտանոցը: Անոր գործերուն շարքին են 9 համանուագներ, 12 պալկներ, 7 հատանուագներ եւ օփերա-մաղթանուագ մը: Ան նաեւ յորինած է մանկական երաժիշտութիւն, որ կ'ընդգրկէ երգերու շարքեր եւ դաշնակի կտորներ:

Պալթեան երաժիշտութեան տեղեկատուութեան կեդրոնը ժամանակին Ռեքասիուսը նկարագրած է իրեն «Լիթվանիոյ ամէնէն խնդրալար յարուցիչ երաժիշտը, որուն ծաղրածուի հակումները երբեմն շուրջ մէջ կը ձգեն անոր գործերուն աւելի լուրջ բնույթը»:

Ռեքասիուս կը սիրէր ցնցել հանդիսատեսը: Ան առիթով մը սրահին բոլոր լուսերը մարել տալով է իր «Տրոյ համանուագ»ին աւարտին եւ օր մը երգչախումբէն մը պահանջած է ոսկի ակունքներ շողացնել հանդիսատեսներուն դիմաց:

Անթանաս Ռեքասիուսի գործերը կատարուած են Միացեալ Նահանգներու, Իտալիոյ, Ֆրանսայի, Ֆինլանտայի, Շուեդիի, Գերմանիոյ, Նորվեգիոյ, Լիթվանիոյ եւ Ռուսիոյ մէջ:

ՉԻՆ ԱՐՈՒԵՍԱԳԷՏՆԵՐՈՒՆ ՀԱՅԵԱՑՔԸ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒՂՂՈՒԱԾ Է

«ԻՆՅԵՐՆԵՇՆԵԼ ԵՐՈՒՆ ԹՐԻՊՈՒՆ» ԿԸ ԳՐԷ ԶԱՆԿԱՅԻ ՄԵՋ ԿԱՅԱՑԱԾ ՓԱՍՏՈՒ ՄԸ ՄԱՍԻՆ, ՈՐՈՒՆ ՆՊԱՏԱԿՆ ԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՐԱՐԻՆԵԼ ՉԻՆԱՍՏԱՆԵՆ ԴՈՒՐՄ ՓԱՅՆՈՂ ԱՍՏՈՒՐ՝ ԶԱՆՈՆՔ ԿԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՎ ԻՐԵՆՑ ՆԵՐՇՆՉՄԱՆ ԱՎՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Շանկհայի Մեծ թատրոնը քաղաքին մշակութային վերազարթումը խորհրդանշել է: Անկախ իր հիմնադրութեան 50րդ տարեդարձը տօնեց ամրան վերջաւորութեան՝ հիւրընկալելով միջազգային արուեստագէտներու փառատուն մը, որուն նպատակն էր արժեւորել չինացի աստղերու ազգային արժանիքը:

Փառատունին կազմակերպիչները հայրենիք հրահրած էին Չինաստանէն դուրս հռչակապահոված երաժիշտներ եւ պարողներ՝ վերլուծելով համար կապը Չինաստանի հանդիսատեսներուն եւ կատարողներուն միջեւ, ինչպէս նաեւ՝ առիթ տալու, որ անոնք վերստին այցելեն իրենց ներշնչման աղբիւրը: Արդիւնքը չարթնուած մը վրայ երկարող շրջանցիչ էլոյթներէ աւելին էր: Անիկա ցայտուն կերպով կ'ապացուցէր, թէ չինական արուեստն ու մշակոյթը որքան յառաջդրած էին վերջին 2 տասնամակներուն, երբ Չինաստան իր դուները բացած էր արտաքին աշխարհին դիմաց: Անիկա նաեւ ցոյց տուաւ, թէ չինացի արուեստագէտները որքան տրամադիր են վերադառնալու, երբ կը կանչուին:

Փառատունին թուականէն միայն 8 շաբաթ առաջ հրահրուած էր չինացի արուեստագէտներ, ինչպէս՝ յորինող եւ խմբավար Թան Տուն, դաշնակահար Լանկ Լանկ, Մեթրոփոլիթըն օփերայի պաս-պարիթոն երգիչ Թիան Հու Ճիանկ եւ պարող Թան Եուան Եուան իրենց Ու-Տուի պարտումըն հետ: Կազմակերպիչ յանձնախումբը, որուն անդամները կու գան Միացեալ Նահանգներու մէջ հաստատուած Մշակութային հիմնարկէն (հիմնարկին ղեկավարներուն շարքին են թաշտակակահար Եօ Եօ Մայի եւ ճարտարապետ Ի. Փիլիման արուեստագէտներ), կը յուսար ցոյց տալ, թէ մշակութային փոխանակումը լաւագոյն միջոցն է հասկացողութեան:

Փառատունը նաեւ Շանկհայի ղեկավարներուն մէջ կ'արթնցնէր նոր դիտակցութիւն մը, թէ անհրաժեշտ էր միջազգային գործակցութիւն ստեղծել Շանկհայի մշակութային վայրերուն:

միջեւ, եթէ քաղաքը պիտի վերածուէր մշակութային եւ տնտեսական մայրաքաղաքի:

Միայն վերջին երկու տարիներուն է, որ տնտեսական եւ մշակութային աւելի թրջատու պայմաններ համոզած են արտասահման գաղթած չինացի արուեստագէտները, ուսանողները, ակադեմիականներն ու մասնագէտները, թէ կարելի է հայրենիք վերադառնալ:

Այսուհանդերձ միշտ է, որ անոնք սիրով կը դիմաւորուին իրենց պաշտակարգներուն կողմէ, թէ եւ ասիկա չի խանգարեր ներհոսքը: Միջազգային հռչակ վայելող արուեստագէտներ գոհունակութիւն կը գգան իրենց փորձառութիւնը բաժնետիր իրենց երկրին արուեստագէտներուն եւ ուսանողներուն հետ: «Չինաստանի տարածքին կատարողական արուեստներու յատկացումը աւելի քան 35 նոր սրահներ կառուցուած են: Հարկ է բերելուցնել տաղանդի հարուստ աւազանը, որպէսզի էլոյթներ տեղի ունենան հոն», կ'ըսէ պաս - պարիթոն երգիչ Թիան Հու Ճիանկ, որ ամէն տարի մասնագիտական դասընթացներ կը կազմակերպէ Շանկհայի մէջ, Նիւ Եորքի երաժիշտական ձուլիլըտ դպրոցին եւ Մեթրոփոլիթըն օփերային գործակցութեամբ:

Պատկերը բոլորովին այլ էր 1980ական տարիներու կէսերուն, երբ Թիան եւ երաժիշտ Թան Տուն Միացեալ Նահանգներ գաղթեցին: Մշակութային Յեղափոխութեան շրջանին հասակ նետած այլ պատմանիներու նման, անոնք կը դիմազրուէին Չինաստան մտնելու եւ խիստ զրաքննութեան համակերպելու կամ արտասահման երթալու եւ ստեղծագործական ազատութիւն վայելելու ընտրութիւնը:

Թան Տուն Օսթարի եւ կրէմլի մրցանակակիր է «Քրաուլի թալկըր, հիտլըն տրեկլըն» ժապաւէնին երաժիշտութեան համար: Անոր «Մարքս Փոյ» օփերայն արժանացած է Կրոնմէյլըր մրցանակին: Երբ Պոսթիւնի սիմֆոնիք նուագախումբը անոր ապաւրած էր գործ մը, որ ներշնչուած ըլլար իր ազգային ժառանգութեանէն, ան իր ծննդավայրին մէջ փնտրած էր գայն:

